600.0078.23.02.22

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 փետրվարի 2022 թվականի №78-Լ
ք. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի №471Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» №471Լ որոշման 1-ին կետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի աշխատանքային ծրագիրը լրացնել հետևյալ բովանդակությամբ 52.1 և 52.2 կետերով.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| «52.1 | Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման եռամսյակային ցուցանիշների ուսումնասիրություն և ամփոփում | Ա. Ուլիխանյան | Ս. Աղինյան<br>Ա. Նռանյան | ապրիլի 3-րդ տասնօրյակ<br>հունիսի 3-րդ տասնօրյակ<br>սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ<br>դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | Հրապարակում հանձնաժողովի վեբ-կայքում |
| 52.2 | Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը | Ա. Ուլիխանյան | Ս. Աղինյան<br>Կ. Սարգսյան | ապրիլի 3-րդ տասնօրյակ<br>հունիսի 3-րդ | Հրապարակում հանձնաժողովի վեբ-կայքում» |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացման եռամսյակային ցուցանիշների ուսումնասիրություն և ամփոփում | | | տասնօրյակ | |
| | | | | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ | |
| | | | | դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ | |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
23 փետրվարի 2022թ.